Հ Ր Ա Մ Ա Ն N 591-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

«29» ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022 Թ. **ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ**

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱԿՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետով, 15-րդ հոդվածի 1-ին կետով և 16-րդ հոդվածի 3-րդ կետի «ժգ» ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 22-ի N 1406-Ն որոշմամբ հաստատված N 5 հավելվածի 18-րդ կետի «դ» ենթակետը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գրիգոր Միխաելի Արշակյանի լիազորությունները դադարեցնել և լուծել նրա հետ 2020 թվականի դեկտեմբերի 18-ին կնքված N 70 աշխատանքային պայմանագիրը:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում Գ. Արշակյանի անաշխատունակության ժամանակահատվածի վերջին օրվան հաջորդող օրը:

Պարտականությունները կատարող՝

ԳՐԻԳՈՐ ՄԻՆԱՍՅԱՆ